ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«31» մայիսի 2024թ.**
Ժամը 15:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ՝ Լուսինե Գասպարյան

Հանձնաժողովի անդամներ՝
«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Գոռ Ծառուկյան
Էկոնոմիկայի նախարարության գիտելիքահենք տնտեսության վարչության քաղաքականության մշակման բաժնի պետ ՝ Համլետ Մկրտչյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ ՝ Սվետլանա Սահակյան
Էկոնոմիկայի նախարարության գիտելիքահենք տնտեսության վարչության փորձագետ ՝ Հայկուհի Գևորգյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության գլխավոր մասնագետ՝ Էդուարդ Ներսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

1. «ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրված մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, գնահատող հանձնաժողովը նիստը կասեցրել էր և հրավիրել էր «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին գների նվազեցման շուրջ բանակցությունների:
1.2 «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն նվազեցրել է գնային առաջարկը, որի արդյունքում առաջարկել է ծառայությունները մատուցել 150 000 000 /մեկ հարյուր հիսուն միլիոն/ ՀՀ դրամով:

Ընդունվել է որոշում. Կողմ – 4 , դեմ – 0 :

2. «ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝
2.1 «ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչել առավելագույն գնահատական ստացած և բանակցությունների արդյունքում գնային առաջարկը նվազեցրած «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին:
2.2 Հաստատել գնման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել,
2.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2.4 Պայմանագրի կնքման նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. Կողմ – 4 , դեմ – 0 :

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝	Լուսինե Գասպարյան	
Անդամներ՝	Գոռ Ծառուկյան	
	Համլետ Մկրտչյան	
	Սվետլանա Սահակյան	
	Հայկուհի Գևորգյան	
	Էդուարդ Ներսիսյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	